ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 13.10.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 34/14

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Ռեմ գրուպ» ՍՊԸ-ի 22.09.2014թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-34/14 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով նշված բողոքը և կից փաստաթղթերը, «Մելիորացիա» ՓԲԸ-ի Կենտրոնին ներկայացրած 26.09.2014թ. թիվ 189-վթ գրությունն ու կից փաստաթղթերը, Պատվիրատուի ի լրումն ներկայացրած 30.09.2014թ. թիվ 192-վթ գրությունը, «ՀՀ ՏԿՆՋՏՊԿ-Մ-ԲԸԱՇՁԲ-3/14» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.09.2014թ. թիվ 2 և 09.09.2014թ. թիվ 3 արձանագրությունները, նշված ծածկագրով բաց ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և ԳԲԽ-34/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 09.10.2014թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «ՌԵՄ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը

22.09.2014թ. ներկայացված բողոքով «ՌԵՄ գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ 01.09.2014թ. «Մելիորացիա» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝

Պատվիրատու) կողմից կազմակերպվել է «ՀՀ ՏԿՆՋՏՊԿ-Մ-ԲԸԱՇՁԲ-3/14» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որի արդյունքների մասին Ընկերությունը տեղեկացել է էլեկտրոնային փոստի միջոցով: Ընկերությունը էլեկտրոնային եղանակով Պատվիրատուից ստացել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը, որը հանձնաժողովի նախագահի և անդամների կողմից ստորագրված չի եղել, ինչի պատճառով Ընկերությունն այն հիմք չի ընդունել: Ներկայումս իրենց անհասկանալի պատճառներով Ընթացակարգի հաղթող է ճանաչվել այլ կազմակերպություն, որի հետ Պատվիրատուն ցանկանում է կնքել պայմանագիր, իսկ Ընկերությունից էլ պահանջում է վճարել հայտի ապահովման չափով տուժանք, որի համար, ըստ Ընկերության, ոչ մի հիմք առկա չէ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 09.09.2014թ. թիվ 3 արձանագրության 2-րդ կետով որոշում է կայացվել, որ ընթացակարգի 1, 2, 3, 4, 5, 8, 10 և 16-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչված «ՌԵՄ գրուպ» ՍՊԸ-ն որակավորումը հիմնավորող փաստաթղթեր չի ներկայացրել, իսկ նույն արձանագրության 4-րդ կետով որոշում է ընդունվել, որ Ընկերությունը, որակավորումը հիմնավորող փաստաթղթեր չներկայացնելով, խախտել է ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված հայտով ստանձնած պարտավորություններ, որի հետևանքով զրկվում է հաղթող ճանաչվելու իրավունքից:

Ընկերության կարծիքով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ կետերը, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի 5-րդ ենթակետը, 78-րդ, 81-84-րդ կետերը և Ընթացակարգի հրավերի 7.3 կետը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «ՌԵՄ գրուպ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է չեղյալ հայտարարել «ՀՀ ՏԿՆՋՏՊԿ-Մ-ԲԸԱՇՁԲ-3/14» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 09.09.2014թ. թիվ 3 արձանագրության 2-րդ և 4-րդ կետերը, պայմանագիր կնքելու մասին որոշումը և պարտավորեցնել Պատվիրատուին առաջարկել Ընկերությանը ներկայացնել որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

2. «Մելիորացիա» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Մելիորացիա» ՓԲԸ-ն 26.09.2014թ. N 189-վթ գրությամբ Ընկերության ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«ՌԵՄ գրուպ» ՍՊԸ-ի բողոքի հիմնական առարկան կայանում է նրանում, որ Պատվիրատուն էլեկտրոնային եղանակով մասնակցին ուղարկել է հայտերի բացման նիստի արձանագրության չստորագրված տարբերակը, ինչն Ընկերությունը հիմք չի ընդունել և չի շարունակել իր հետագա մասնակցությունը Ընթացակարգին:

Ինչ վերաբերում է «ՌԵՄ գրուպ» ՍՊԸ-ի կողմից նշված իրավական ակտերի խախտված կետերին, ապա «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները): Նշված իրավական նորմում չկա որևիցե հղում որևէ ծանուցմանը և դրա ձևին, այլ ընդհակառակը, հստակ նշված է, որ մասնակիցը պետք է ներկայացնի տեղեկատվությունը հրավերով սահմանված ժամկետում:

Նույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը վերաբերում են փաստաթղթերի (տեղեկատվության) և հայտի գնահատմանը, ինչն այս պարագայում քննարկման առարկա հանդիսանալ չի կարող, քանի որ նման տեղեկատվություն (փաստաթղթեր) մասնակիցը չի ներկայացրել:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 35-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի նիստերը սղագրվում (կամ տեսաձայնագրվում կամ ձայնագրվում) և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր

կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Ըստ Պատվիրատուի, վերոնշյալ կետը վերաբերում է արձանագրության կազմման պայմաններին, այլ ոչ թե Պատվիրատուի կողմից տեղեկատվության տրամադրմանը: Ընթացակարգի բոլոր նիստերը արձանագրված են և ստորագրված են գնահատող հանձնաժողովի կողմից:

Կարգի 78-րդ կետի, ինչպես նաև Ընթացակարգի Հրավերի 7.3 կետի համաձայն՝ գնումները համակարգողը երեք աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում է գնահատող հանձնաժողովի անդամների ներկայացրած գնահատման թերթիկները և կազմում հայտերի գնահատման արձանագրություն, որը ստորագրում են հանձնաժողովի անդամները:

Նշված գործառույթը սահմանված ժամկետում իրականացվել է գնահատող հանձնաժողովի ու հանձնաժողովի քարտուղարի կողմից և որևիցե խախտում տեղի չի ունեցել: Գնահատման թերթիկները մասնակցին չեն տրամադրվում, իսկ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության պատճենը տրամադրվել է «ՌԵՄ գրուպ» ՍՊԸ-ին:

Կարգի 81-84-րդ կետերը վերաբերում են մասնակցի որակավորման չափանիշներին, դրանց հիմնավորման համար ներկայացվող փաստաթղթերին և դրանց գնահատման կարգին: Մասնակիցը սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, հետևաբար՝ դրանց դրական գնահատման մասին խոսք լինել չի կարող: Տվյալ դեպքում, դրանց բացակայության պատճառով մասնակիցը զրկվել է Ընթացակարգի հետագա մասնակցության իրավունքից:

Ինչ վերաբերում է բողոքի քննարկման առարկային, ապա Պատվիրատուն հայտնել է, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված է «հրապարակում» հասկացությունը, ըստ որի հրապարկումը՝ տեղեկությունը մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցներով, համաշխարհային համակարգչային ցանցով (այսուհետ՝ Ինտերնետ), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնելը և մատչելի

դարձնելն է, իսկ նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանվում է տեղեկությունների տրամադրման պայմանները, որի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն՝ Պատվիրատուն մասնակցին չի ծանուցում կամ այս և այն կերպ չի զգուշացնում որակավորման փաստաթղթեր ներկայացնելու պարտավորության վերաբերյալ: Դրանք մասնակիցը պետք է ներկայացնի ինքնուրույն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

Ընթացակարգի հրավերի 7.4 կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հետո առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը 5 աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովին է ներկայացնում նույն ընթացակարգին իր որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Ընթացակարգի հրավերը, ինչպես նաև գնումները կարգավորող բազմաթիվ այլ տեղեկատվության օրինակելի ձևերը, նույնպես հրապարակային փաստաթղթեր են, որոնք հրապարակվում են գնումների կայքում էլեկտրոնային տարբերակով և չեն պարունակում որևիցե մարմնի կամ նրա ներկայացուցչի ստորագրություններ, սակայն դրանք հիմք են ընդունվում Ընթացակարգի վարման համար: Նույն սկզբունքով մասնակիցը կարող է հայտարարել, որ հրավերը ստորագրված չէ այն հաստատող հանձնաժողովի կողմից և ստացվում է, որ, եթե նման բնույթի բողոք լինի, կարելի է հրավերը հիմք չընդունել, ինչից էլ եզրակացրել է, որ դա անհեթեթություն է:

«Մելիորացիա» ՓԲԸ-ն 26.09.2014թ. թիվ 189-վթ գրությունում նշել է նաև, որ Ընթացակարգի հրավերի պարտադիր մաս է հանդիսանում Պատվիրատուի

պաշտոնական էլեկտրոնային հասցեի առկայությունը, ինչը նշված է հայտարարության մեջ: Միաժամանակ պարտադիր պայման է հանդիսանում նաև մասնակցի կողմից իր պաշտոնական էլեկտրոնային հասցեի հայտով ներկայացնելը: Այսինքն, նշված էլեկտրոնային հասցեներով ցանկացած տեքստի նամակագրություն ապահովելը, համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի, համարվում է տեղեկատվության տրամադրում: Մինչդեռ՝ վերը նշված ընթացակարգում մասնակիցը չի ժխտում այն փաստը, որ ինքը ստացել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.09.2014թ. հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրության չստորագրված օրինակը: Նշված օրինակը տեղեկություններով չի տարբերվում թղթային ստորագրված տարբերակից, հետևաբար՝ Ընկերությունը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն, 01.09.2014թ. ժամը 16:45-ին էլեկտրոնային փոստով տեղեկացված է եղել առաջին տեղ զբաղեցնող ճանաչված լինելու մասին, սակայն պաշտոնական տեղեկատվությունը թողել է անհետևանք:

Ի լրումն 26.09.2014թ. թիվ 189-վթ գրության՝ Պատվիրատուն 30.09.2014թ. թիվ 192-վթ գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Օրենքի 30-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվան հաջորդող օրացուցային օրվա ընթացքում հայտերի բացման նիստի արձանագրության պատճենը տրամադրվում է այն մասնակիցներին, որոնք կամ որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել այդ նիստին: Այսինքն, եթե մասնակիցը ներկա է եղել նիստին, ապա նրան արձանագրության որևիցե օրինակ չի տրամադրվում, բացառությամբ նրա կողմից նման պահանջ ներկայացնելու դեպքի: Որից հետո, վկայակոչելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և Ընթացակարգի հրավերի 7.4 կետերը, Պատվիրատուն եզրակացրել է, որ Օրենքի համաձայն՝ մասնակցի նույնիսկ բանավոր ձևով տեղեկացնելը՝ իրեն առաջին տեղ զբաղեցնող ճանաչելու մասին, բերում է մասնակցի կողմից հրավերով ստանձնած պարտավորությունների կատարմանը: Տվյալ դեպքում, մնում է միայն ապացուցել մասնակցի կողմից նման տեղեկություն ունենալու փաստը, իսկ այն, որ Ընկերությունը տեղյակ է եղել իրեն որպես առաջին տեղը զբաղեցրած

մասնակից ճանաչվելու մասին, ապացուցելու կարիք չկա, քանի որ մասնակիցը դա չի ժխտում, պարզապես դեմ է տեղեկատվությունը տրամադրելու ձևին:

Ամփոփելով վերագրյալը՝ Պատվիրատուն եզրակացրել է, որ Ընթացակարգի վերջնական նպատակը հաղթող ճանաչվելու վերաբերյալ իրազեկվացությունն է, հետևաբար գտնում է, որ Ընկերության ներկայացրած բողոքն անհիմն է և ենթակա չէ բավարարման:

3. ԳԲԽ-34/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 09.10.2014թ. եզրակացությունը և առաջարկել է «ՌԵՄ գրուպ» ՍՊԸ-ի 22.09.2014թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի: Դադարեցնել «Մելիորացիա» ՓԲԸ-ի կողմից կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՏԿՆՋՏՊԿ-Մ-ԲԸԱՇՁԲ-3/14» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.09.2014թ. թիվ 3 արձանագրության 2-րդ և 4-րդ կետերով և նշված ծածկագրով ընթացակարգի 1, 2, 3, 4, 5, 8, 10 և 16-րդ չափաբաժիններով կայացված պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Ընկերության բողոքը՝ պարտավորեցնել Պատվիրատուին առաջարկել Ընկերությանը ներկայացնել որակավորումը հիմնավորող փաստաթղթերի մասով, մերժել:

4. ԳԲԽ-34/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-34/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Մելիորացիա» ՓԲԸ-ն կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՀՀ

ՏԿՆՋՏՊԿ-Մ-ԲԲԱՇՁԲ-3/14» ծածկագրով բաց ընթացակարգ, որին մասնակցել է նաև «ՌԵՄ գրուպ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.09.2014թ. ժամը 11:00-ին կայացած հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով որոշում է կայացվել, որ բոլոր մասնակիցների հայտերում հրավերով նախատեսված փաստաթղթերն առկա են և կազմված են հրավերին համապատասխան:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.09.2014թ. ժամը 11:00-ին կայացած հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետով որոշում է կայացվել հայտերի գնահատումն իրականացնել նիստին և լրացնել գնահատման թերթիկները, իսկ նույն արձանագրության 7-րդ կետով որոշում է կայացվել ընթացակարգի 1, 2, 3, 4, 5, 8, 10 և 16-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «ՌԵՄ գրուպ» ՍՊԸ-ին:

4. «ՌԵՄ գրուպ» ՍՊԸ-ն, չմասնակցելով հայտերի բացման նիստին և տեղեկություն չունենալով հայտերի գնահատման արդյունքներից, մասնակիցների հայտերի գնահատման արդյունքների մասին տեղեկացել է էլեկտրոնային փոստի միջոցով, մասնավորապես՝ Պատվիրատուի կողմից 01.09.2014թ. ժամը 16:45-ին Ընկերության էլեկտրոնային հասցեին է ուղարկվել գնահատող հանձնաժողովի 01.09.2014թ. ժամը 11:00-ին կայացած հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրության չստորագրված օրինակը:

5. Ընկերությունը, ստանալով ընթացակարգը գնահատող հանձնաժողովի 01.09.2014թ. հայտերի բացման նիստի չստորագրված թիվ 2 արձանագրությունը, այն հիմք չի ընդունել և չի շարունակել իր մասնակցությունը Ընթացակարգին, քանի որ չստորագրված արձանագրությունը փաստաթուղթ չի համարել:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 09.09.2014թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով որոշում է կայացվել, որ Ընթացակարգի 1, 2, 3, 4, 5, 8, 10 և 16-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչված «ՌԵՄ գրուպ» ՍՊԸ-ն որակավորումը հիմնավորող փաստաթղթեր չի ներկայացրել:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 09.09.2014թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետով որոշում է կայացվել, որ Ընկերությունը, որակավորումը հիմնավորող փաստաթղթեր չներկայացնելով, խախտել է ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված հայտով ստանձնած պարտավորություններ, ինչի հետևանքով զրկվում է հաղթող ճանաչվելու իրավունքից: Նույն կետով գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել՝

- ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «ԱՎՈՅԱՆ ԿՈ» ՍՊԸ-ին,
- ընթացակարգի 3-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «ԳՈՌՏԻԳ» ՍՊԸ-ին,
- ընթացակարգի 4-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Սաշա և Սպարտակ» ՍՊԸ-ին,
- ընթացակարգի 5-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Հիդրո-վերանորոգում» ՍՊԸ-ին,
- ընթացակարգի 8-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Արտաշատ Ջրշին» ՍՊԸ-ին,
- ընթացակարգի 10-րդ և 16-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Դավիթ-Նորայր» ՍՊԸ-ին:

8. Գնահատող հանձնաժողովի 11.09.2014թ. թիվ 6 որոշմամբ հաստատվել և հրապարակվել է «ՀՀ ՏԿՆՋՏՊԿ-Մ-ԲԲԱՇՁԲ-3/14» ծածկագրով բաց ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումները

Քննելով «Ռեմ գրուպ» ՍՊԸ-ի 22.09.2014թ. ներկայացրած բողոքը, Խորհուրդ գտնում է, որ այն ենթակա է բավարարման մասնակիորեն հետևյալ հիմնավորմամբ.

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված պահին՝ հայտերի բացման նիստում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

Արձանագրությունը ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել գնահատող հանձնաժողովի նիստերին: Մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները կարող են պահանջել գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

Վերը նշված հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվան հաջորդող օրացուցային օրվա ընթացքում հայտերի բացման նիստի արձանագրության պատճենները տրամադրվում են այն մասնակիցներին, որոնք կամ որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել այդ նիստին:

Վերոնշյալ իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ գնման ընթացակարգի մասնակիցները պարտադիր կերպով պետք է իրազեկվեն գնահատող հանձնաժողովի իրականացրած հայտերի բացման և գնահատման արդյունքների մասին, սակայն, օրենսդիրը հստակ սահմանել է գնահատող հանձնաժողովի նիստերում կայացված որոշումների մասին մասնակիցներին իրազեկելու եղանակները: Դրանք երկուսն են՝

1. Ներկա գտնվել գնահատող հանձնաժողովի նիստերին.

2. Նիստի արձանագրության պատճենները տրամադրել մասնակիցներին, որոնք կամ որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել այդ նիստին:

Վերոգրյալից հետևում է, որ բացի օրենքով նախատեսված իրազեկման վերոնշյալ եղանակներից, գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի քննարկման արդյունքների և կայացված որոշումների մասին մասնակիցներին որևէ այլ եղանակով կամ ձևով իրազեկելը չի համարվում իրազեկում և մասնակիցների համար չի առաջացնում իրավական հետևանքներ:

Տվյալ դեպքում Պատվիրատուն, խախտելով Օրենքի 30-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված պահանջը, մասնակցին չի տրամադրել գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի 01.09.2014թ. թիվ 2 արձանագրության պատճենը, հետևաբար՝ վերջինս իրազեկված չի եղել հայտերի բացման նիստին

գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումներից, ինչի պայմաններում գնահատող հանձնաժողովի 09.09.2014թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ և 4-րդ կետերով ընդունված որոշումները՝ Ընթացակարգի 1, 2, 3, 4, 5, 8, 10 և 16-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչված «ՌԵՄ գրուպ» ՍՊԸ-ի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթեր չներկայացնելու և նշված փաստաթղթեր չներկայացնելով՝ ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված հայտով ստանձնած պարտավորությունները խախտելու ու հաղթող ճանաչվելու իրավունքից զրկելու մասին, անհիմն են: Այսինքն՝ Ընկերությունն իրազեկված չլինելով գնահատող հանձնաժողովի 01.09.2014թ. թիվ 2 արձանագրության 7-րդ կետով իրեն ընթացակարգի 1, 2, 3, 4, 5, 8, 10 և 16-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչված լինելու մասին, չէր կարող խախտել որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերն առաջին տեղն զբաղեցրած ճանաչվելու օրվանից հնգօրյա ժամկետում գնահատող հանձնաժողովին ներկայացնելու Հրավերի 7.4 կետով ստանձնած պարտավորությունը:

Խորհուրդը հարկ է համարում նշել նաև, որ Կարգի 55-րդ կետով սահմանվում է էլեկտրոնային եղանակով նամակագրության փոխանակման կարգը, ըստ որի՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով, ինչը Պատվիրատուի կողմից նույնպես չի կատարվել:

Խորհուրդը գտնում է, որ «ՌԵՄ գրուպ» ՍՊԸ-ի բողոքը՝ պարտավորեցնել Պատվիրատուին առաջարկել Ընկերությանը ներկայացնել որակավորումը հիմնավորող փաստաթղթերի մասով, ենթակա է մերժման, քանի որ Խորհուրդն Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, նման լիազորություն չունի:

Պատվիրատուի 26.09.2014թ. թիվ 189-վթ գրությունում նշված փաստարկն այն մասին, որ հրավերը, ինչպես նաև գնումները կարգավորող բազմաթիվ այլ տեղեկատվության օրինակելի ձևերը, նույնպես հրապարակային փաստաթղթեր են, որոնք հրապարակվում են գնումների կայքում էլեկտրոնային տարբերակով և չեն

պարունակում որևիցե մարմնի կամ նրա ներկայացուցչի ստորագրություններ, սակայն դրանք հիմք են ընդունվում Ընթացակարգի վարման համար, ապա Խորհուրդը գտնում է, որ նշված փաստարկը չի կարող հիմք հանդիսանալ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.09.2014թ. թիվ 3 արձանագրության 2-րդ և 4-րդ կետերով և նշված ծածկագրով ընթացակարգի 1, 2, 3, 4, 5, 8, 10 և 16-րդ չափաբաժիններով պայմանագիր կնքելու մասին կայացված որոշումները դադարեցնելու մասով ներկայացված բողոքը մերժելու համար, քանի որ տվյալ դեպքում արծարծված հարցը վերաբերում է ոչ թե հրավերի կամ հրապարակային այլ փաստաթղթի օրինակելի ձևերը տրամադրելու կարգին, այլ գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը մասնակցին տրամադրելու Օրենքի 30-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված պահանջին, ինչը տվյալ դեպքում խախտվել է Պատվիրատուի կողմից:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի վկայակոչած «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 10-րդ հոդվածներում ամրագրված դրույթներին, ապա դրանք վերաբերում են հրապարակում հասկացությանը և պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության տրամադրման պայմաններին, որոնք ներկայացված բողոքի առարկայի հետ որևէ առնչություն չունեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

1. «Ռեմ գրուպ» ՍՊԸ-ի 22.09.2014թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի: Դադարեցնել «Մելիորացիա» ՓԲԸ-ի կողմից կոլլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՏԿՆՋՏՊԿ-Մ-ԲԸԱՇՁԲ-3/14» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.09.2014թ. թիվ 3 արձանագրության 2-րդ և 4-րդ

կետերով և նշված ծածկագրով ընթացակարգի 1, 2, 3, 4, 5, 8, 10 և 16-րդ չափաբաժիններով կայացված պայմանագիր կնքելու մասին որոշումները:

2. «ՌԵՄ գրուպ» ՍՊԸ-ի բողոքը՝ պարտավորեցնել Պատվիրատուին առաջարկել Ընկերությանը ներկայացնել որակավորումը հիմնավորող փաստաթղթերի մասով, մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Ենոքյան Գոռ**

Անդամներ՝ **Նազարյան Մանե**

Ավագյան Ավագ